



577

L. I-4







ՏՈՒՅԹԻՑԻՐՆ Ա ԳՈՐԹԻՆՅԱՆԻ — ԳՈՂԻՐԵ 1389.



“ՓԻՒՆԻԿ”Ի ԾՐԱԳԻՐԸ

- ՓԻՒՆԻԿ պիտի հրատարակուի ափսոս երկու անգամ, ամեն ամսոյ մին եւ 15ին
- 1 .. Տոհմային կեանքի հին ու նոր պատկերներ, կենսական եւրջին վրայ լուրջ ուսումնասիրութիւններ, Հայոց գաղթային հոսանքին վրայ օտարական տեղեկութիւններ, մասնաւորապէս Եգիպտոսի հին ու նոր գաղթականութեանց:
 - 2 .. Արձակ եւ ոստանուր բանաստեղծութիւններ, հեղինակութիւն ու բարգմանութիւն:
 - 3 .. Գիտական նորութիւններ, կէս-ժամօր ժողովրդոց կեանքէն ու բարեքն մանրամասնութիւններ, հաշակաւոր երկրախոյզներու երկերէն բաղուած:
 - 4 .. Եգիպտական հնութեանց ու նորութեանց վրայ ուսումնասիրութիւններ, տեղային լուրեր, վարչային ու կրթական խնդիրներու վրայ տեղեկութիւններ:
 - 5 .. Կիսամտեայ ընդի. բաղաճական կացութեան վրայ հոծ ու ամփոփ տեղեկութիւններ:
 - 6 .. Արտասահմանի եւ գաւառական բողոքութիւններ:

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Եգիպտոսի համար	Տարեկան	Ֆր. 10
» »	Վեցամսեայ	» 6
Արտասահմանի համար	Տարեկան	» 12 1/2
» »	Վեցամսեայ	» 7
Կովկասի համար	Տարեկան	բուլղ. 5

ԲՈՎԱՆՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նպատակ եւ ուղղութիւն. — Խ.	Եգիպտախօսական (Քարնաքի տաճար):
Մաղթանք մը. — Գ. Օ.	Թղթակցութիւն. — ՄԻՐԻԿ
Մահերգ. — * * *	Տեղային լուրեր
Լեւոնականի մը Յուշատեսիլը. ՀԱՅԿ-ԼԵՒՈՆ	Ազգային Բրօնիկ
Հայուն բաժինը. — Ս. ԲԻԻՐԱՏ	Քաղաքական Կացութիւնը

Ձեռագիրները եւ չեն դարձուիր: Կ'ընդունուին ամեն տեսակ ազգեր: Նամակ, յօդուած եւ բաժանորդագին պէտք է զրկել առ Տիար Ս. ԲԻԻՐԱՏ

Direction de la Revue Arménienne PHÉNIX
 INSTITUTION CENTRALE
 LE CAIRE.

ՓԻԻՆԻԿ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԿԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Մ. ՏՄՐԻ

1 ԱՊՐԻԼ 1899

ԹԻՒ 1

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Երբ հանրային դառնալու կ'սպառնայ տխուր դաղափարը [Ժէ հայ թերթ մը չ'ունի դոյութեան իշաւունք՝ Փարսաննէրու այս ընդարձակ երկրին մէջ, ոչ յամբիլը տեսած է արդէն հայ նեղոսին ու մարիլը Փարոսին, մէթէ յանդգնութիւն չը պիտի՝ համարուէր նոր հայ թերթի մ'երեւումը։ Ասկայն, բարեբաղդենք դոնէ ոչ այդ յոռեօտութեան համաճարակէն բռնուած չ'ենք, և ընդ հակառակին, առանց լուստեղ ըլլալու, մեծ հաւասար ունինք մեր ժողովրդին՝ վրայ, որուն համար պիտի դրենք և որո՛վ միայն պիտի զբաղինք։

Ներմուծել առողջ դաղափարներ ընկերութեան փոսած ըզեզերուն մէջ, բարձր պահելու շանալ բարոյական և մտաւորական մտաբարդ ազդմեր յեզին, որ նիւթ ապէս քանդուելէ ետք՝ քիչ մ'ատեն հանդ չեցնելու

պէտք ունի մեծ պէտքէն զարնուած գրունն ու ջնջուած ըզեզը. վառ պահել միշտ Մեծ զգացումը, Մաշհայրենիքի վերակենդանացման օրինակը, յոյսը, հայ դաղթականութեան սպասին մէջ, որ տակաւ ուր'չնոր ու օտաւր համակրա թխններէ կը փորձուի։ Այդ ջրուած, վհատ ու շահնախ բեկորները հայութեան, բերել մեռեցնել իրարու, նոր ոյժ մը կալմել, դաղափարներու հոսանք մը խաղացնել սնոր մէջ, և աղտոտ սիրութեան ձգտումները բանավարութեան հետ հաշտեցնել. իրական շահերը պաշտպանել հանգութեան, անհասանքը վարժեցնել կամքի, կորովի և ձեռներէցութեան. ահա՛ մեր նպատակը։

Օգար միջավայրերու մէջ պատկանելի դիրք մը դրանոյ ազգակիցներու պոնդ մ'ունինք, որոնց անընդ հատ շիւղի պէտքն առելի քան

երբէք կ'ընչտուի . գիտակցութիւնը մեր գործերուն, ինչ որ կը պակսի դժբաղդաբար մեր տենդոս գործունէութեանց մէջ ալ, անխուսափելի պայմանն է մեր նպատակի յաջողութեան փոքրութիւնը, մանաւանդ մերը, ճերմակ թերթիկ մ'է թղթի, նոյնութեամբ կ'ընդունի սենշանագրերը . վա՛յ ուրեմն այն հրապարակագիրներուն, որոնք իրենց արճեսարբա՛ծ են շահագործել փոքրիկի այդակարութիւնը :

Անկախ խմբագրութիւն մը, զերծ

անձնական փոքրութիւններէ և կուսակցային կիրքերէ ու ծագրելի ընդհարումներէ . անաչառ քննադատի աչքով, ոչ թէ զաչալու ազանդամայի մը յամառութեամբ, գիտել իրերն ու գատել ազգային շարժումները . բոլորքէլ՝ հաստատուած զեզումներու գէ՛մ : փոքրութիւնը կեզեքողը, անոր ևւանդն ու միամտութիւնը շահագործողը, ըլլայ ուամիկ, ըլլայ սո՛ճմիկ, գիմակալերծ ընել . ահա՛ փիւնիկի նշանաբանն և ուզողութիւնը :

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք Մ Ը

Մօռաւորապէս քառորդ դար մ'ապին կը գտնուինք այն ժամանակներէն՝ երբ աշխարհի վրայ խաղաղութիւն կը սիրէր գեռ ու հայ փողովուրդին անծանօթ էին անտեսական, առեւտրական և ուրիշ չեմ գիտեր ինչ տեսակ տագնապներ, շէն էին սիրտերը ու քրակները լեցուն, և աշխարհիկ զուարճութիւններու լիտլի վայելումին մէջ՝ սոսկալին վառ կը մնար հաւատքի ու կրօնի սէրը, նուիրական ուխտատեղիներն այցելելու իղձը . Վերջապէս՝ գեռ սիրտերու մէջ չ'էր ինկած այն սրբազան կայծը որ յետոյ հրդեհի պէս բռնկելով՝ մոխիր պիտի դարձունէր հայաբնակ դաւաճները և արիւնի ու գիակի շրջանը պիտի բանար :

Գրեթէ բոլոր հայաչառ կեդրոններէ զո նոգաբունդ կը գիմէին այն ատեն երուսազէմ . վանքը՝ սթափելով իր մտկոյական թմրութիւնէն՝ շէն շող երևոյթ մը կ'առնէր . վանականները հայեցողական կիանքի մը միօրինակութիւնն ու տաղատ կը կը մտնային պահ մը, ու մութ նրբանցքներու

երկայնքը շարուած խցիկներուն մէջ ու գուրսը ստուերներու տեղ կեանքի իլըրտումը կ'սկսէր . երկսես ուխտաւորներու բազմագոյն տարազը, լեզուի ու սովորոյթներու պէտպիսութիւնը . իրախճանքի զուարթ կայթիւններն ու ընտանեկան կենցաղի անուշ պատկերները՝ իանդամատութիւն մը կը բերէին վանական լին մենութեան ու աշխարհիկ վայելումներուն կարօտը կ'արծարծէին սքեռաւոր երուստին մէջ, սրոց համար արհամարհելի սիրտանք մը չ'էր՝ կրօնական մեծանանգէս արարողութիւններու ժամանակ՝ փայլել գէթ եկեղեցական ոսկեճամուկ արդուզարպին ներքեւ :

Բայց ամենէն աւելի խոր տպաւորութիւն ու անջնջելի նեաք թողած է մտքին մէջ հոգեւոյն Ետայի Պատրիարքը զոր այս սորուան պէս կը յիշեմ իր պարթեւ հասակով թիկնաւէտ ու կարչնեղ, իր թխաթոյր ու լեցուն գէմքով լացն ճակատի մը տակ, թաւ ու սաթի պէս սեւ յօնքերու կամարին ներքեւէն փայլող երկու խոշոր աչ-

քերով՝ կրակոս ու զմէն արտայայտու-
թեամբ . ու կարծես զեռ ականջիս մէջ
կը հնչէ մարմրոզ արձագանգ՝ իր գոռ ու
որոս ձայնին որ՝ բամբ ու անեղ վերտա-
նումներով՝ տաճարի կամարներն ու զբմ-
բէթը կը զլրգէր երբ Պատրիարքական
գահէն՝ Սիրիլլայի մը յախշտակութեամբ՝
«Յանին կեաց» քարոզը կը կարգար հա-
ւասարացողներու յովնախումբ բազմութեան,
միշտ միեւնոյն անսխալ սկզբնաւորու-

թեամբ, «Ըստ բնաբանիս մերում Հայր մեր
որ յերկինս ես», ու վերջացնելով միշտ
միեւնոյն անսխալ մաղթանքով, «Ճէնա-
պը հագգիտալիչա՛րմըղըն զըրճընը քէսքի՛ն
էյլէսին»։ Ու սրտաբուխ ալե՛մներու խուլ
որոտում մը հիմներէն կը սաշտէր սրբավայ-
րը ու կը հասնէր մինչեւ երկինք ։

Անկէ ի վեր, ա՛տ՛ղ, միթէ չարիէն
աւելի լսելի չ'եղա՞ւ այդ մաղթանքը ։

Գ Օ .

ԼԵՌՆԱԿԱՆԻ ՄԸ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

Այս անունը կը կրէ այն ստուար ձեռա-
գիր հասորը , որ աչսօր մեծ ձեռքը կը գրե-
նուի ։ Հանդեսիս առաջին բառոյն մեջ կը
հրատարակենք այդ յուսատեւորին միայն յա-
ռաչաբանը , խոստանալով յաշորդ քիւե-
րուն մեջ մաս առ մաս ի լոյս հանելու ամ-
բողջ գործը , որ ինքնին արժեք ունի ո՛չ
այնչա՛փ գրողին անհասոյական կեանքին ,
որչա՛փ իր հայրենի երկրին վրայ տաւած
լի ու լի եւ շահեկան ծանօթութիւններուն
համար ։ Հաւաստի ենք քե՛ յառաչաբանն
այժմէն պիտի կրնայ երաշխաւորել ընթեր-
ցողներուն գնահատումը ։

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Կան մարդիկ , որ կ'ապրին միայ-
նութեան խաղաղութեանը մէջ , ա-
ռանց ներգործելու իրենց գարուն
վրայ , որուն հետ կը կորսուին ։ Կա՛ն
որիչներ ալ , ոչ իրենց նմաններուն
ծառայելու տենդէն բռնուած՝ կը
նետուին ընկերային հոտանքին մէջ ,
կ'ունենան մերթ յաճախ և մերթ
ճախող ելուէ՛ղներ , մրդկոտ կեան-
քերու յատուկ ։

Առաջինները՝ պատմութեան չ'են
վերար՛րիք , կամ ճիշդ բառն բաժ-
ըլլալու համար , կենդանաբանութեան
նիւթ կ'ենան ըլլալ , չ'գտնուելով
տարբերութիւն իրենց ու կենդանեաց
ապրելու եզանակին մէջ ։ Իսկ վեր-
ջինները , որ գժբաղդօրէն , նուազ
երջանիկներն են . և հետեւապէս ,
ճշմարիտ թշուառները , չ'են կորսուիլ
գարերուն ընթացքին մէջ , այլ կ'ապ-
րին ապագայ սերնդին հետ ։ Այդ
աղէտի հերոսները՝ չ'են հասարակ
ու սոսկական մահկանացուներէն՝ ու-
րոնց անձուկ է կեանքի նպատակը ,
այլ պաշտուած են անոնք հանրու-
թեանէն , և պիտի չ'անհետանան , ցոր-
չա՛փ շրջի մարդկութիւնը մեր մուր-
րակին վրայ , և ցո՛րչափ մեր մուր-
րակն ալ գտնայ իր առանցքին վրայ ։

Ո՞րքան բարեբաղդ եմ որ ես մար-
դատեաց մեծակեայ մը չ'եմ և ո՛չ
ալ բարբառ ընդունակ , թէեւ վեր-
ջիններէն ըլլալու յաւակնութիւնը

չ'ունենամ. միայն բուն իզձ մը տանջած է զիս մանկութենէս ի վեր, տահմիս ծառայելու իզձը, որ տակաւ ածած, սիրտս հրդեհած և վերջապէս բերած ձգած է զիս հոս, սղջերու գերեզմանին մէջ, որ ամեն յոյս կորած և ամեն ոյժ ջախջախում է:

Ահա նորէն մութը կոխեց. բանտապաններն արթուն, հաւերու տարմի մը պէս բանտարկեալներն իրենց առջևէն կը քշեն ու կը լեցնեն խուցե'րը. խոնաւ ու ցած, տեսակ մը նկուզներ, որոնց մէջ շարժուն դիակներ կը խլրտին . . . : Ականջս կը խոցեն շառաչները շղթաներուն, որ մահապարտներուն ու դատապարտեալ սճրագործներուն սաքերը կը պրկեն: Խուցիս կանթեզին նիհար նշոյլը՝ պապ ու ճերմակ պատերուն վրայ կը ցուայ, հոն ստուերներ կը նկարէ, և ես, այդ կանթեզին ու այդ ստուերներուն հետ կ'երազեմ: Հեռուէն, հայրենի լեռներու վեհափառ ուրուականները կուզան կ'անցնին աչքիս առջևէն. ըզիզս, յիշատակներու մոխրակոյտ մը, կ'սկսի քրքրախլ, և այն մոխրին առի թայուած անցեալ մը կ'սկսի արձարձիլ. կ'նշուլէ և զնդանիս թանձր արհուսելիքը կ'արթնցնէ: Հոն, հեռուն, կապոյտ երկնի ու կարմիր արեւի տակ՝ ազատ լեռնախմբները կը կայտաւեն. հոն, վերը, կարկուտի տարափներուն ներքեւ, Պէրիտի ձիւնաթաւով գազաթին վերեւ, որտապոյ ամպերուն միջեւ, ամբոխ մը կ'ե-

ռայ կը վարդէ, որտարզներու ամբոխ մը, լեռն ի վեր մազլլի՝ կ'որոայ եզնիկներն ու կարճաները լեռներուն. խի վաշը, ծագկապտակ կողերը քերոց անցնոց մանկերամը կը նշմարեմ, որ հաւը կը տանի արօտայայքը, եօթն-եղբայր սասնաջուշ վտակին եզերքը. որտարդ, հովիւ, ահա՛ հայրենի երկրիս երիտասարդ ութիւնը: Գարձեալ վարդ, հարաւի բլուրներուն ստորտը, ճուղքը կը գոտայ փրփրուտ, գետակս հայրենի, որ ժայռերը կը ծեծէ և յոխորտընթաց կը վազէ. արեւը և արեւմտան ավերան երկայնքը, ցուցահանդէս մը կը պարզուի կանաչ թուփերու և ծագկած փշատիներու. ջրեպաններն ու այդեզ սրճները կ'վազեն իրենց վատակներուն. այդ ցատանները սեցած են. մշակները գետինը փորած ու յօտելու սկսած են սրթատունիկերը. շարժում մը, եսուտի զեռուտի յորդառատ հասանք մը, կեանքի պայքարի ամենապաշտ ու նահապետական ձեւն է հոն. խի հո'ս, այս անհաշտ միջավայրում, կեանքեր կը հիւծին ու կը փճանան միայն և միայն յամուռ բանակալի մը խեղճին համար լինու՞մ. — որովհետեւ իրեն մարդ սպրեւտ փորձ մ'ըրած են. ահա՛ սճիւններուն ստիպելն, որուն պատիժը սպրեւլէ զրկելու փորձն է. ա՛յս է Սրէնքը, ա՛յս է Գառաւառանը . . . :

Հոս բանտերու ժամայայցիկը կը զարնեն, փակ դռներուն ճանջիւնները նորոպել տալու համար. ճճճճ-

ներու ամենէն ընդարձակ ու հոյակապ հնութիւնները կը կազմեն :

Հեղաշնատ Պարսից, Աբարապետ, Եգիպտոսի քրիստոնէից ու ֆէլլահներու ձեռամբ քար ու քանդ գործած եւ երկրաշարժներէ ու պարբերական ողողումներէ կո ծանած այս հսկայադործ յիշատակարանները դիմադրած են սակայն ամեն տեսակ մարիկներու, եւ ահաւասիկ սիրնքաներ ու վիթխարի սիւներ կը բխին յողէն իւր արիւղ գարու մը ու բուռականներ՝ վկայ հանդիսանալու համար անհեռացած քաղաքակրթութեան մը փառաց ու զօրութեան :

Այս հուշակաւոր աւերակներէն, որոնք ծանօթ են զբառաշրջիկներուն եւ որոնց համար միայն կ'արժէ եզրագտական ճախրորդութիւն մը, մասնաւոր յիշատակութեան արժանի են գլխաւորապէս Նեղոսի աջ եզրեքին վրայ երկու խումբ շէնքեր՝ Քարնաք եւ Լուքսոր, իսկ ձախ եզրեքին վրայ Կարնակ, Ռամսէս եւ Մէտինէթ-Ապու. երկրորդական կարեւորութիւն ունեցող յիշատակարաններ հետուէն ու մօտէն կը շրջապատեն այս վեհաշուք ամբողջութիւնը՝ թեթիւ լայնածաւալ դաշտին տարւի գերեզմանատան մը երեւոյթը՝ կռահելի հսկայական արձաններով ցանցընուած :

Այս յիշատակարանաց ամենէն կարեւորն է Քարնաքի խումբը ուր երեք տարիէ ի վեր ահագին աշխատութիւններ կը կատարուին ընդ հսկողութեամբ Փրահայի հնագէտ Պ. Փօթ Լէկրէնի, զննիչ եգիպտական հնութեանց ճիւղին :

Քարնաքի մեծ տաճարը շինուած է ի պատիւ Ամօնի, Մինիչ աստուած Կախի եզրագտացոյց : Եթէ հաւատ ընծայուի աւանդութեանց, ու անոր համար հարկ է 2400 տարիներու երեւակայական թուական մը եւ երթալ Քրիստոսէ առաջ, այս առաջին սրբարանը կամ մեհեանն արիւղ

րան չ'էր՝ այլ նոյն Մինիչ աստուծոյ բնակարանը զոր հիմնած է Օզերթաղէն Ա. : Յունաց Գերդեան տաճարին նման՝ այս մեհեանը եգիպտացոյ համար աղբայի յիշատակարան մը կը դառնայ ընդհուպ, եւ իրարու յաջորդող բոլոր վեհապետները միակ նշատակ մը կ'ունենան, այն է գեղեցկացնել զայն մին միւրը նսեմացնող հոյակապ ու մեծադործ շինութիւններով :

Այսպէս, Թաթմէս Բ. կը բարձրացնէ այն կոթողները որոնք մէյմէկ հրաշալիք են շնորհալի նրբութեան եւ հարթ շանդակներով կը զարգարէ տաճարին որմերը : Թաթմէս Գ. կը կանգնէ նախագումներ, կը հիմնէ սբալատ մը, կրանիթով կը վերաշինէ նախնական սրբարանը ու կը կառուցանէ համբաւաւոր ճեմերիք :

Ռամսէսներու օրով գեղեցկագոյն շէնքեր կ'աւելնան. Սիւնաղարդ սրահը, այս հրաշարուեստ սիւնախումբն՝ որ սիւնանեան զործ մը կը թուի, շինել տուած են Ռամսէս Ա., Սէթի Ա., Ռամսէս Բ. եւ Ռամսէս Գ. (1800 տարի Ք. Ա.) :

Յիշատակարանն ամբողջացնելու համար հարկ եղած է շինել նոր սրբարան մը, նախագումներ եւ սիւնաղարդ գաւիթ մը. Ռամսէս Գ. յաջորդները չ'են համարձակած նոր շինութիւններու ձեռնարկել :

Սիւնաղարդ սրահն ամբողջապէս ծածկուած էր. մինչեւ հիւս կը տեսնուի զայն լուսաւորող պատուհաններէն մին. իրապէս մեհեան մը չ'էր այն, այլ հանդիսաւոր գումարումներու համար սահմանուած միութեան վայր մը :

Երեք դար յետոյ վերջին Փարաւոնները ի զուր կը ջանան գերազանցել այս շնաշխարհիկ գլուխ գործոցը. իրենց շինած նոր սիւնաղարդ սրահը կիսաւարտ կը մնայ. միայն ութը սիւներ կը բարձրանան պարագութեան մէջ՝ իրենց վրայի կիսաշէն սիւնաղարդ գաւիթներով :

(Շարունակելի).

ՀԱՅՈՒՆ ԲԱԺԻՆԸ

Մընած ըլլալ առողջ, աչտա,
 Հայր, մայր, եղբայր, քոյր հարազատ,
 Այս ամենէն տեսնել զգուանք,
 Յետոյ վարել պանդխտի կեանք,
 Օգնելու վարժ ձեռքեր բանալ,
 Անգութներէ՝ գութ մուրանալ,
 Փախտաական, հիւանդ լքուած,
 Հասարակ ցա՞ւ մ'է այս, Աստուած,
 Բայց այս ցա՞ւն ես հաներ բաժին,
 Ամեն անոնց որ հայ կոչին :

Հայրենիք մը թողուլ ետին,
 Տուն սեղ, տաճար յանձնել քրդին,
 Բռնակալին կամքին հրու,
 Փախչիլ, կեանք մը լոկ փրկելու,
 Տեսնել հեղեղն արեան հոր, մոր,
 Տղոց, կնոջ, քրոջ, եղբոր,
 Զո՞նկ պատիւ, ինչ որ, ըստացուած,
 Հասարակ ցա՞ւ մ'է այս, Աստուած, եւ ին :

Դարերով թագ, մական կրող,
 Ազգ մ'ըլլալ, ազգ մը վեհ, յաղթող,
 Արեւելքի արշաւանքին
 Դէմ կուրծ բանալ, դնել հոգին,
 Արեւմուտքի խաչակրայնալ
 Պաշար, մթերք ու զինո՞ր տալ :
 Յետոյ լքուիլ առանձնացած,
 Հասարակ ցա՞ւ մ'է այս, Աստուած, եւ ին :

Ճակատագրին թէ երկնքին
 Խաղն է բունք, Հայո՛ւ կեանքին
 Տուգանքո՛վն է որ Եւրոպա,
 — Կոր կրթըւած ցեղն անոպայ —
 Արիւնշաղախ իր շահերուն
 Յազարդ կուտայ, եւ երկրուն
 Գահը Թուրքին ի՛նքն է բռնած,
 Հասարակ ցա՞ւ մ'է այս, Աստուած, եւ ին :

Օտար օքով ջրով սընած
 Ազգը, լիզան, կրօնը մոռցած
 Պաղ անտարբեր ընկններուն
 Կամքէն կախուիլ անաէր, անտուն,
 Մինչդեռ չուրջրդ դիմակ գրեր՝
 Կերուխուժի զիրենք սուեր,
 Կը ծաղրեն սուգը, արցունքը ու լաց,
 Հասարակ ցա՞ւ մ'է այս, Աստուած, եւ ին :

Ու վէրքերը դեռ թաց ու բաց,
 Դէպ հայրենիքը թեւարաց,
 Հա՛ աչելով բուննը բարեւ
 Ազատութեան տեսնել արեւ,
 Յանկալ, յուսալ եւ երազել,
 Աչերը բաց, զուր ըստասել,
 Յետոյ մեռնիլ բան չ'տեսած,
 Հասարակ ցա՞ւ մ'է այս Աստուած, եւ ին :

Ո՛չ, ո՛չ, երբէ՛ք չ'եմ հաւատար
 Որ մեր ցաւը բուժէ օտար,
 Ո՛չ ալ յոյսըս կարել կ'ուզեմ
 Իմ անուցած իղձէս վսեմ,
 Անշուշտ եմ թէ, մօտ կամ հեռի,
 Պիտ' ազատուի ազգն իմ գերի,
 Լուծը, շղթան նետած, կտարած
 Պիտի կանչէ. «Հերի՛ք, Աստուած»,
 Ճաւեր միայն սուիր բաժին,
 Ամեն անոնց որ հայ կոչին :

Ս. ԲԻԻՐԱՏ

ՉՏԻՆԱԳ ՏԻՈՅԱԳ

ՄԱՅԵՐԳ

Սելպարները բերոյ ճառուն Մեծ-Նուպարին,
 Բոյորսիք կոհակները կը գուպարին,
 Մովը խորէն անունն Անոր կը մըռընէ,
 Հովը բերի բեովը բօքը կը գուծէ:

Նաւ, դագաղ, ծով ու հով
 Համակուած իր մահով:

Որ կը դիմեն մեքի սնունդը մուրալու,
 Հայ հանճար սանմանուած էր հոն մարելու.
 Բարից, ազնիւ ծնունդներու մտախպար,
 Մարեց հայուն վերջալոյսը, յոյսը, Նուպար.
 Անիծեա՛լ հող օտար,
 Հստ՛, ու՛ր է Նուպար:

Պերճախօս է լուսիւնը սեւ դագաղին,
 Եգիպտոսի բարեբարին հուսկ անկողին,
 Ուր կը պառկի հզկան վերջին այս կես դարուն,
 Անմահութեան դափնիներովը զարդարուն.
 Բուրգերուն իսկ տխար
 Հանճարովը Նուպար:

Սո՛ւք՛, Հայե՛ր, երգել երգը սգաւորին,
 Հին սուգին հետք խառնելով սովոր Նորին,
 Քամենք միտուր բաժակին, Նուպարայ սուգ,
 Որու մահը կ'արժէ հոսել ծով արսասու՛ք.
 Արսասու՛ք, հայութեան,
 Չը ջամֆիր յախտեան:

Բահայոյցը մեռա՛ւ հայուն, մա՛ր է ճանքան,
 Քայլամուր պիտի դիմենք դէպ ի դամբան,
 Ալեկոծիկ ազգի մը նաւը խորեցաւ,
 Նաւակայի փարոսին լո՛յսը մարեցաւ.
 Լանկ, լալէ յը դադրինկ,
 Զի Նուպար բռնա՛ւ երկինկ:

Հայ դիւանագէտը իր մանուսմբ արեղև-
 րական յուզում մը եւ տեսակ մը պաշտում
 առաջ բերաւ, մանուան հետեւեալ օրը
 թերթերը մրցումի ելան պետական մեծա-
 նուն մարդուն կենսապրութիւնը հրատա-
 րակելու: Մամուլը, թէ՛ հայ թէ՛ եւրո-
 պական եւ թէ՛ արարական, ա՛յնչպի գրա-

ղեցաւ անով, որ բան մը չ'մնայ մեր կողմէն
 աւելցնելու, միայն պատշաճ դատեցինք
 հանդէսին Ա. թուոյն մէջ ղետեղել «Մա-
 հերգ» մը, որ գրուած է անմահ եղիպտա-
 հայուն մանուան զոյժն ի Գահիրէ հաս-
 նելուն յաջորդ օրը, դառն եւ թարմ տպա-
 ւորութեան մը ներքեւ:

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

Աղեխանգրիս, 25 Մարտ 1899

Բարեկա՛մ, Տանթեն յանդգնութիւն
 կոչեց եւ Ա. Հեղինէի աքտորականը՝ դրամ,
 իբր յաջողութեան պայման մեծ ձեռնարկ-
 ները: Չեմ ուզեր քննել թէ պատմական
 այս երկու մեծ գէժերէն ո՛րը իրաւունք
 ունի, սակայն ապահովապէս զիտեմ որ
 արժանայարգ մետաղը իր անուրբ բացա-
 կայութեամբ կը նսեմանայ ծակ գրպանիդ
 մէջ, եւ կամայ ակամայ նախընտրած ես
 յա՞ղպնութիւնն որմէ՛ անուպառ հանքի
 մը պէս՝ միաք ունիս քաղել բոլոր ոյժդ
 եւ գրական փառքի մը հետ շինել նաեւ
 բազդդ՝ որ կարծեմ շատ ժպտուն ու հաշտ
 չ'է հետդ: Եւ միթէ յանդգնութիւն չ'է՞ր
 ազգային վարժարանի քթին տակ (ի հե-
 ճուկս պիտի ըսէր գրաբարեան մը) մաս-
 նաւոր կրթարան մը հաստատելու ձեռնար-
 կըդ, բան մը որ Եգիպտոսի հայ գաղութի
 տարեգրութեան մէջ ի՞նչ նախընթացը չ'է
 ունեցած: Կը խոտովանիմ որ ի սկզբան
 ե՛ս ալ չարքին մէջ էի այն դաս մը յոռե-
 տեաներուն ուրնք բնաւ յոյս չ'ունէին
 յանդուգն քալից յաջողութեան վրայ եւ
 որոնց զժուար կ'ուզար հաւատալ թէ Ե-
 գիպտահայ ժողովուրդը, որ անխլատակ
 ժամանակներէ ի վեր վարժուած է պիլե-
 կրթութեան եւ որ մինչեւ իսկ՝ բարեյի-
 շատակ կտակարարներու շնորհիւ՝ եկե-
 ղեցապատկան եկամուտներէն նպաստ ըն-
 դունդներու ստուար թիւ մ'ունի իր մէջ,
 պիտի յօժարէր թողուլ Տարսէլ-Կինէնայի

Ազգ. ձրի վարժարանն եւ սեւ աչքիդ, սեւ
 ունքիդ զարնուելով՝ թոշակաւոր կրթա-
 րանիդ ճամբան ցոյց տար իր զաւակնե-
 րուն, քանի որ մեր առնմային կրթու-
 թիւնն ամեն կլիմայի եւ ամեն միջավայ-
 րի մէջ գրիթէ համանման ուղղութիւն
 մ'ունի, եւ եթէ ո՛չ միօրինակ ծրագրի՝
 կամայականութեան կողմանէ քիչ շատ
 իրարու կը նմանին մեր կրթական բոլոր
 հաստատութիւնները, թաղային ըլլան թէ
 մասնաւոր. սա սարքերութեամբ որ մինչ-
 դեռ այս վերջինները անկախ ու անկաշ-
 կանդ կը վարեն իրենց հիմնարկութեանը՝
 առանց տարագէտ միջամտութեանց վախն
 ունենալու, թաղայիններն ստէպ քմա-
 հաճոյքներու հովէն կը տարուերին եւ
 անհարկի վոխոխութիւններով յետադարձ
 քայլեր կ'առնեն յառաջդիմութեան շա-
 դին մէջ: Սակայն մօտ երկուքուկէս տար-
 ւան լսիկ մնջիկ ու արդիւնաւոր գոյու-
 թիւնը կրթարանիդ եւ ցարդ յարատեւու-
 թիւնն՝ է՛ն թերահաւասներն անդամ ըմ-
 բերանեցին եւ բացորոշապէս ցոյց տուին
 թէ տոկուն եւ անվհատ կամքի մը համար
 երբէք չ'կրնար սուղի նստիլ յանդգնու-
 թիւնն եւ ամենէն ամուլ կարծուած ջան-
 քերն իսկ կը պսակուին:

Կ'երեւի թէ այս առաջին յաջողու-
 թենէդ քաջալերուած, հիմակ ալ ելեր ես
 հրապարակագրի մարմաջներ ունենալ եւ՝
 գործը գաղափարին միացնելով՝ կիտամեայ
 հանդէս մը հրապարակ նետել, չ'եմ զիտեր
 ի՛նչ պակաս լեցնելու համար, քանի որ

արդէն բաւականէն աւելի ունինք թեր-
 թեր եւ պարբերականներ՝ մանաւա՛յն ար-
 տասահմանի մէջ, որոնք աւելի կամ նուազ
 յաջողութեամբ կը գոհացնեն ընթերցող
 հասարակութեան սէնթերն ու փափայլը:
 Բայց, ի՛նչ որ ալ ըլլայ գրական այս նոր
 ձեւնարկից նպատակը, շատ կը սխալիս
 եթէ կը կարծես թէ պարբերական թեր-
 թի մը հրատարակութիւնը՝ մասնաւոր
 վարժարան մը հիմնելու չափ զիւրին եւ
 յաջողութեան առին հաւանականութիւն
 ունեցող խնդիր ըլլայ: Թողունք գործին
 նիւթական կողմը որ, ինչպէս առեւտրա-
 կան ս'րուէ ձեւնարկի մէջ, ապահովուած
 պէտք է ըլլայ՝ գոնէ որոշ շրջանի մը
 համար՝ հաւանական անյաջողութեանց
 դէմ, բարոյացուցիչ լրագրութիւնը կամ հրա-
 պարակազրութիւնը կերպով մը հզօրացոյ-
 նին իրաւունքը գարձած է իրաւ. հզօր՝
 գրականութեամբ, դադարաւորութեան նորու-
 թեամբ, բացատրութեանց գունազեղ սճով,
 իրերն ու անձերը դատելու նրբամտ եղա-
 նակաւ եւ հիւթից ու շահեկան նիւթիւրու
 ձօնութեամբ: Վերջին տասնեակ տարուան
 շրջանի մը մէջ մանաւանդ հայ լրագրու-
 թիւնը՝ թէ՛ Թուրքիա, (Պոլիս, Իզմիր)
 թէ՛ Կովկաս եւ թէ՛ Եւրոպա՝ ահագին
 բարեշրջում կրեց շնորհիւ ներհուն եւ
 ասղանդաւոր գրողներու որոնք՝ թէեւ
 ստեպ փրանսական գրականութենէն ու
 լրագրութենէն ներշնչուած՝ անվիճելի
 ձեւնահասութեամբ կը շօշափեն ցեղային,
 լեզուական, գիտական, ընկերային եւ այլ
 բազմապիսի խնդիրներ, մեծագոյն բաժին
 մը նուիրելով միշտ տոնմային ինքնուրոյն
 յատկանիշներու, լեզուի, զգայումներու
 եւ գաղափարներու ազնուացման ու զար-
 զացման, եւ որոնց առջեւ ստիպուած է
 դադրիլ գոյութեան իրաւունք ունենալէ
 երբեմնի միօրինակ, տախակ, անդոյն եւ
 անհամ հրապարակազրութիւնը: Հիմա, բա-
 րեկամ, կը հարցնեմ քեզ, կիտամոսայ հան-
 դէսդ պիտի կրնա՞յ արդի լրագրութեան
 այս բարձր մակարդակին վրայ մնալ եւ
 գոհացնել զարգացուն միաքերու պահանջ-

ներն ու ճաշակը, մանաւանդ Եգիպտոսի
 պէս բացառիկ հանդամանքներով բեղուն
 երկրի մը մէջ, որու հայ գաղութն այն
 սուսակ խառնուրդներէն է որոնց բազազ-
 րիչ տարրերու համեմատական քանակը
 կաշիլի չ'է ճշգիւ ս'րուէ չափանիշով,
 տարրե'ր հակամարտ բարքով, կրթու-
 թեամբ, ճաշակով ու սովորոյթով, զորս
 իրարու հետ շաղկու, ձուլելու, միազանգ
 ամբողջութիւն մը կազմելու համար՝ ան-
 հրաժեշտ պէտքը կայ լրագրական զօրեզ
 միջնորդի մը՝ ընտանեկան, ընկերային,
 կրթական եւ կրօնային փոխադարձ կա-
 պերն ամրապնդող եւ յարաբերութիւնները
 մշակող: Պիտի կրնա՞յ այդ միջնորդի դերը
 կատարել քու հանդէսդ, ասպզան պիտի
 ցուցնէ զայդ: Գիտես որ մօտ անցեալի
 մը մէջ Փարոս լրագիրը որ շափ օգ-
 սաւէտ եւ յաջողակ կերպով կրցաւ
 ի գործ դնել զայն՝ իր խնամուած խրմ-
 բագրութեամբ եւ ժողովուրդի շահե-
 բուն համաձայն ուղղութեամբ, թէեւ՝
 աւա՛յ կարճատեւ եղաւ իր գոյութիւնը
 զուտ նիւթական պատճառներով՝ սակայն
 հանդէսից երեւումով ո՛չ միայն արգելք
 մը չ'աւելնար Փարոսի վերստին հրատա-
 րակման, այլ ընդհակառակն՝ աւելի՛ կը
 շեշտուի անոր պէտքը զոր իրագործելու
 փափագ՝ ու պատրաստականութիւնը
 ինչ ինչ շրջանակներու մէջ՝ արդէն կը
 նշմարուին հոս:

Արդ, առաւօտ ու իրիկուն ըլլալով՝ ահա
 փրկելից ծնաւ՝ (մոխրէ՞ն թէ ոչ ուղեղէ՞դ՝
 չ'եմ գիտեր) որ ապահովապէս չ'պիտի ուզէ
 խաբել իր վրայ գրուած յոյսերը՝ Ապրիլ
 մէկին ծնած ըլլալուն համար. ընդհակա-
 ռակն, որչափ որ անձանօթ է ինձ առ այժմ
 անոր ծրարիրն ու ուղղութիւնը, պիտի
 յաջողի լիովին պահել այդ յոյսերը եւ
 յարգ ու համարումը շահիլ ընթերցող հայ
 հասարակութեան՝ եթէ լուրջ ու ազգօգուտ
 հանդէսէ մը պահանջուած պայմանները
 լեցնէ, եթէ անշահասէր, խղճամտ ու
 անկողմնակալ ուղղութեամբ պաշտպան
 կանգնի ժողովուրդի շահերուն՝ առանց

աջէն ու ձախէն փչած հովերուն զլուխ ծակու, առանց յստորապու փոքրերուն վրայ ու մեծերուն առջև քծնելու. եթէ, վերջապէս՝ քաջութիւն ունենայ զեղծումները նշաւակելու, ագեղ բարքերն ու մուրաթիւնները ձագկելու, առողջ սկզբունքներ, ողջամիտ գաղափարներ ներմուծելու ժողովրդեան ամեն խաւերուն մէջ եւ զար-

գացնելու ինքնաճանաչութեան, համեարաչխութեան եւ եղբայրակցութեան ոգին:

Ահա այս ուղղութեամբ եւ այս շաւղին մէջ ընթանալու պայմանաւ ի սրտէ կը չնորհա որէ Փիւլսիկի ծնունդը եւ յաջողութիւն ու յարաւսեւութիւն կը մաղթէ անոր,

Բարեկամդ
ՄԻՐԻԿ

Մ Ա Յ Ե Ր

ԲԻԼԻՌՈՒՍՏ. — Տիւուր պաշտականութիւն մ'ունենալ կը կարծենք թէ եւ քիչ մ'ուշ, մեր տաղին թիւի մէջ իսկ արձանագրելու մի քանի մաներ, սրտնք սուղի տարի մը գարձուցին ԳԳ թուականը մասնաւորապէս եղիպտոսայ հասարակութեան համար: Գրեթէ բան մը չի մնայ մեզ գրելու հանգուցեալ նուազար փաշայի վրայ, որու մահուան եւ յուզարկաւորութեան մանրամասն պարագաներն օրը օրին հրատարակուեցան ալլային ու օտար լրագրութեան մէջ հանդերձ կենսազրականներով ոչոնց ամենէն շահականն ու ընդարձակը թուեցաւ մեզ Տիար Բ. Քէչեանի հրատարակածը Բիւզանդիոնի մէջ, ինքնագիր ըլլալու առաւելութեամբ:

Նուազար փաշայէն անմիջապէս յետոյ հողին յանձնուեցաւ Բիէռ Բօլատ որ անցեալ Փետր. ամսոյն անակնկալ կերպով կնքեց իր մահկանացուն իր ասպարէզի կէսին մէջ, գժնդակ հի-

ւանդութեան մը հետեւանօք եւ հաւկառակ բժշկական ազգու գարմաններու: Հանգուցեալը մին էր այն հազուադիւս գէմքերէն սրտնք հանգամանքներու բերմամբ՝ ուշ կը ճանչցուին թէ եւ, տակայն անդամ մը ճանչցուելէ յետոյ՝ խորազգեցիկ ազաւորութիւն, հմայքի պէս բան մը կը թողուն իրենց ապրած միջովային ու պատկանած հասարակութեան մէջ. եւ աւելի կանուխ ճանչցուած չ'ըլլանուն մարտնքը զլայնել կ'ուտան: Որչափ գիտենք, հանգուցեալ Բիէռ Բօլատ բնիկ Իզմիրցի էր, բարեհամբաւ գերդատտանի անդամ, եւրոպական խնամեալ կրթութեամբ մը օժտուած, երկաշ տարիներէ ի վեր Եգիպտոս հաստատուած եւ առեւտրական հրապարակին վրայ պատուարելը գիրք մը, փայլուն առնուն մը շահած՝ իր ուղղամիտ եւ հեղափոխութեամբ բնաւորութեամբ, ազգային թէ օտար ամենաբարձր շքրջանակներու մէջ համակրութիւն եւ

յարգանք զբաւած՝ իր անիւ և վեհանձն նկարագրով և պարկեշտ քաղաքացիի մը անտոգիւտ համբաւով :

Հաղիւ եօթը տաշի կայ ոչ անգուոյս ազգային գործերու շրջանակին մէջ ծանօթ դէմք մը դարձած էր և նոյն օրէն մինչեւ իր մահը վարեցանքնդ հատ Քաղ. Ժողովի Ատենապետութեան պաշտօնը զնահատելի արժանեօք և այնպիսի արդարութեամբ՝ որ ամեն քննադատութենէ վեր կը մնայ : Հանրային սուգ մը իր մահը, շքեղ ու արժանաշայել եզաւնահել իր յուզարկաւորութիւնը : Բաղնաթիւ պատկներ նուիրուած էին իր զազային՝ Գահիրէի և Աղեքսանդրիոյ հայ ու օտարալզի բարեկամներու և համակիրներու կողմէ, և յուզարկաւորներու ընտրուած բազմութիւն մը, որ կը նշմարուէին Վսեմ Պաշտ փաշա Նուպար, Տիգրան փաշա Ապրօ, Սագուպ փաշա Արթին, և հայ ու եւրոպացի ականաւոր անձերու ստուար թիւ մը, Գրէտի Լիւնէի գրամատան Տնօրէնը, Խառն Դաւաբանի Նախագահը, Քրանտական Լնդհ. Հիւպատոսին փոխանորդը եկած էին իրենց վերջին մեծարանաց հաւատարմքն ընծայելու ամենապատուական քաղաքացիին ոչ այնքան տարածամ կերպով հրաժեշտ կ'ուտար իր արդիւնալից կեանքին : Եկեղեցւոյ մէն՝ յայտնապէս զգածուած շեշտերով և հանգուցիալը մտէն ճանչցողի մը խորունկ համաշունջով Առաջն.

Տեղապահ Գեր. Աշոտ Սրբազան սրբառու ու զամբանական մ'արտատանց պատշաճագոյն բնաբան ընտրելով Աւետարանի սախօքը. «Ահա՛ խորայէլայի յորում նենդութիւնն ո՛չ գոյ» : Գրտատեց հանգուցի լայն բանմանութիւնները, ներկայից զայն իր հանրային ու անհատական անբասիր կեանքի մէջ իբր բարութիւնն անձնաւորեալ. ի վերջոյ՝ Երկնքի մը խիթարութիւնը հայցեց նորա վշտաբեկ ծերունի մօր և ամբողջ սգակիր ընտանեաց և բարեկամաց :

ՄԱՐՏԻԿ ՔԵՐԷՍԹԻՆԻՆ. — Ստոյգ է թէ՛ ո՛չ նուպար փաշայի հանճարը, ո՛չ ալ Բիէո Բօլտաի կրթութիւնն ունէր սա, սրպէսզի այդ պատկառելիներուն հետ խառնուէր իր անունը, սակայն զրեթէ մէկ շարթուան մէջ տեղի ունեցող իր մահուան զուգադիպութեան հետ միացնելով զթատիրտ ու սուստաձեւն անձի մը համբաւն իրաւամբ փայլելու պարագան, ազգային վշտալիցութեան ստիթ եզաւ անտարտեղի կորուսար Մարտիկ Քէրէսթէնի, որ թէեւ հեռի ապրած ազգային գործերու շրջանակէն, յաճախ գործնական ապացոյցներ տուած էր իր մարդասիրական աշխիւ զգացումներուն, յօժարամիտ մասնակցութեամբ քաջալերելով ազգօգուտ ու բարեգործական շատ մը ձեւնարկներ : Յուզարկաւորութիւնը կատարուեցաւ ոչ նուազ շքով. զազայը՝ ծածկուած

էր շատ մը պատկենբով, ազգական նայ ու բարեկամայ կողմէ ձօնուած. Եկեղեցւոյ մէջ Գեր. Արքայան Տեղապահը սրտառուչ դամբանականով մը շեշտեց հանգուցեւոյն բարեմասնութիւնները : Արդէն սղբացեալը աւրիներէ ի վեր գործօն դեր մը կը կատարէր տեղւոյն հայոց Բարեգործական Ընկերութեան մէջ,

սրուն, կրօնն թէ՛ հիմնադիրներէն մին եղած էր :

Այս քանի մը տողերը նախընթաց տոյն երկու սղբացեալներու յիշատակին, Փիլոսոփի խմբագրութիւնը կ'ուզայ իր անկեղծ ցաւակցութիւնը հրապարակաւ արտայայտելու հանգուցեալներուն վշտակիր ու անմխիթար ընտանեաց և ազգականաց :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՒՆԵՐ

ԸՆԹԵՐՅ. ԵՐԵՎԱՆԻ. — Ընկերութեան կաշնակերպած 21/4 Յունվարի նուագահանդէսը, որ նուագար փաշայի մահուան պատճառաւ յետաձգուած էր, նախ յայտարարութեան մը համեմատ տեղի ունեցաւ Մաշտ աւանոյ Աին շարքի գիշեր՝ ընթերցատան սրահներուն մէջ՝ որ գրեթէ ամբողջովին լեցուած էին ներկաներու հոծ բազմութեամբ մը : Հայ և օտարազգի արուստոտազէտներ, Պարսնայք Է. Սանթրինի, Ժ. Բէնտարի, Ա. Նազըշեան և Պ. Նիկողիմոսեան, գաշնակի և ջութակի վրայ՝ մերթ առանձին և մերթ ընկերովի նուագեցին եւրոպական ընտիր կառններ. հաճելի և հաշրապէս անակնկալի մը տպուարութիւնը բրա Պ. Ա. Օրօշէց որ գաշնակի և ջութակի ընկերակցութեամբ երգեց զոյգ մը սիրուն բովանաններ՝ ճշմարիտ սրտերօտայի մը քաջավարժ ու նրբահնչիւն ճայտով : ա՛յնքան կնոջական որ հեռուէն ըսող

մը անվրէպ երգչուհւոյ մը քնքուշ հազազէն թուած խաղեր պիտի կարծէր : Ոչ նուազ ակտրօսի տպուարութիւն մը առաջ բերաւ Պ. Յ. Օհանեան որ ջութակի և գաշնակի ընկերակցութեամբ՝ վարժ քեկօրի մը կրթովի ու զգայուն շեշտերով երգեց երկու հայկական երգեր, «Չայն աւար ո՛վ ծովակ» Առաքի (Քամառ-Քարթիպայի ըստ յայտագրին), «Ո՛վ ծիծեռնակ» Վ. Սվաճեանի : Պ. Բէնտարի, ինչպէս միշտ, այս անգամ ևս իր գուարժ մենախօսութիւններով և ճշմարիտ կատակերգակի մը ընական ու անբռնազբօսիկ ծամածռութիւններով՝ երկկոյթին փայլն տակցոյց և բուն ծափահարութիւն ու ծիծաղ խլեց հանդիսականներէն :

Երկկոյթի Բ. մասին մէջ Պ. Սեղբաք Օտապոշեան բանախօսութիւն մը արտատանեց Սուտանի վրայ՝ այնքան զգայում ու եռանդ զնեւով իր անձնական տպուարութիւններու

արտայայտութեան մէջ, նոյնքան
տեղի զգալի ընելով Սուրբանի վրայ
լայր՝ ու շահեկան անգեկութիւննե-
րու պակասը :

Գաղաղներու պահուն Վեցօիրամ
մը նուագեց շատ . . . սկսուն եղա-
նակներ, ոչչափ կարելի է սիրուն
կոչել ձագարի մը բերնէն թափած
տկար՝ ու կերկեր ճոճօցները սրունք
սակայն՝ Ամերիկայի ելք քարագէտին
պատիւ բերելու հանգամանքը չու-
նէին բնաւ :

Յաւարտ երեկոյթին փոքրիկ վի-
ճակահանութիւն մը կատարուեցաւ
և ժամը գրեթէ մէկին ներկայք
մեկնեցան՝ հաճելի ու զբօսական
ժամանց մը վայելած ըլլալու ապա-
ւորութեամբ :

Փափաքելի է ոչ հայ ընթերցա-
տան Պատ. վարչութիւնը, ինչպէս
աչդէն մի քանի տարիէ ի վեր սո-
վորութիւն ըլլած է՝ յետ այսու ևս
չաշունակէ մերթ ընդ մերթ այնօրի-
նակ հանդէսներ և երեկոյթներ վա-

յելելու հաճոյքը ընձեռել հայ հա-
սարակութեան, ոչ ինքն ալ իր կողմէ
պարտականութիւն պէտք է զգայ
նիւթապէս ու բարոյապէս սատարել
այս օգտաւէտ հիմնարկութեան զար-
գացման և ջանալ միշտ պահելու
զայն այնպիսի դիրքի մը մէջ՝ որ
պատուաբեր ըլլայ քաղաքիս հայ
գաղթականութեան և օտար նմանօ-
րինակ հաստատութեանց շարքին մէջ
գրաւէ փայլուն տեղ մը :

Ս. ՎԱՐԴԱՆԱՆՅ ՆԵՐԿԱՅՍՑՈՒՄԸ. —
Մարտի Թին լուսնալու գիշերը, չորեքշաբ-
թի իրիկուն, Ապու Սալիլի արարական
թատրոնը՝ նկողնոտ կը խաչէին հայրու-
պատկաւելի բաղժութիւն մը: Օթեակները
լեցում էին՝ հոգ չ'է թէ մէկ քա՛ ին ալ
առանձնաշնորհալ ճրիակներէ և գե-
տինը, բոլոր թիկնաթուներն, աթոռներն
ու նստարանները բնուած : չքեզ էր երե-
կոյթը և աւելի չքեղութիւն մտած էր
խաղաղահան նուագածուներու խմբակի մը
ձայնակցութեամբ :

Ռ.Սէտլ ֆձեանի նկղինակութիւնն էր ող-
բերգութիւնը որ բաւական յաջողութեամբ
վերջացաւ :

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՕՆԻԿ

ԳԱՀԻՐԷԻ ՔԱՂ. ԺՈՂՈՎԸ. — Վերջա-
պէս լուծեցին անլուծելին. տեղույս Քաղ.
Ժողովը, որուն կօթնամայ գոյութիւնը՝
կը ծաղրէր Մամանադութիւնը և որ գեռ
պիտի ապրէր, կթէ ժողովուրդը չ'թօթուէր
իւ անտարբերութիւնը, Մարտի 28ին երե-
շաբթի օրը գումարեցաւ Ազգ. Երեսօ-
խանական ժողովը Առաջնօրգարանի ոչաճին
մէջ ընդ նախագահութեամբ Գեղ. Սրբա-
զան Տեղապահին, և քուէարկութեամբ

ընտրեց նեռեւեալ պատուարժան աղղա-
յիններն յանդամակցութիւն Քաղ. Ժողովոյ.

Տիար Արթիւր Ստեփան

» Բարթիկ Նահապետեան

» Զեհոյր Պէյ

» Մուխէս Անանեանց

» Յովհաննէս Նախնուխ

Ըյս վերջինը հրատարած և Մարտ 28ի
նիստին մէջ իրեն տեղ ընտրուած է Տիար
Արմենակ Պէյլերեան : Յիշեալ Պատուար-

ժան տեարց վրայ կատարուած ընտրութիւնը կը նկատենք իբրև փայլուն ու զօրեղ ապացոյց մը ժողովուրդին գիտակցութեան եւ լուսաճութեանը. նեանուաբար, կը սիրենք յուսալ թէ՛ Նոյննոր Քաղ. ժողովոյն առաջին գործը պիտի ըլլայ ձեռք առնել երեսի վրայ ձգուած ազգ. կարգ մը կենսական խնդիրներ, որոնց մէջ աչքի դարնողն է կրթականը, վերաբերելուն համար մեր մասաղ սերնդին դատարարական եւ կրթութեանը Գալս [Առաջնորդի մընարութեան խնդրոյն, դա մենէ մտնելուն գիտնալիք բանն է :

Գնահատելով հանդերձ նախորդ քաղաքական ժողովոյ անդամներէն ոմանց անվիճելի արժանիքը, կը մաղթենք որ նորընտիրը գարմանէ անցիալ շրջանի սխալները, օգտուելով անշուշտ սեւ դգեկի յաւիտենական խորհրդականին փորձառութենէն, որդէսղի արդարացնէ իր նկատմամբ ցոյց տուած հանրային համարումն ու համակրանքը :

ՎԻՊԹՕՐԻԱ ԹԱԳՈՒՀԻՆ ԵՒ ԻԶՄԻՐԼԵՍՆ. — Կ. Պօլսոյ Մօակի թրթակցէն բխած անսպասելի լուրի մընայելով՝ Հայոց երկաթէ Պատրիարքը՝ Անդրիոյ Վեհ. թագուհոյն Պատուակալ Տաներէցն անուանուեր է : Ուստի այժմէն շատ կենթադրութիւններ կ'ըլլան այս մասին լուստեսներու եւ յոռետեսներու կողմէ. ոմանք այդ անուանումը կը համարին իբրև գիււանդիտական հնարք մը, նախկին Պատրիարքը ազատելու համար իր ճգնարանէն. իսկ

որիչներ աւելի առաջ երթալով, բողէ բողէ կ'սպասեն Նորին Ամեն. Սրբազնութեան ծովային ճամբորդութիւնը գէս ի Ալբիօն. ճիշդ ինչպէս որ եղաւ քանի մը տարի առաջ Ս. Յակոբրեան վանքին մէկ խուցը ճգնող եւ հիմայ Մայր-Աթոյր բաշմող Վեհ. Հայրիկին, ամենակարող Չարին մէկ անգամաւ չի Հրամանովը : Երանի՛ թէ այս վերջին կենթադրութիւնը հաստատուէր. որպէսզի արդարութիւնն ի գործ դրուած ըլլայ, Սիօնէն Ռէսպոնսիտար փոխադրել տալու լրբիտանական քաղաքականութեան անմեղ զոնը :

ԶԷՅԹՈՒՆ. — Մարտի 15 թուով Զէյթունէն գրուած նամակէ մը կը տեղեկանանք թէ՛ ցորենի սղութեան եւ արժտեաց պահատութեան նեանուաբար՝ ժողովուրդը ստակալի տառապանքի մէջ կը գտնուի, թէեւ տեղացին իշխանութիւնը զժողովութեան առիթ չ'տար, չբիտանեայ դայմագամին ժողովրդականութիւնը երթալով կ'աւելնայ :

Այս ընդհանուր ալէսին մշտնադարական կողմն է Ս. Ատուածածնոյ վանքին մէջ նոր որբանոցի մը բացումը, 50 որբ'րու համար :

ՎԱԻԵՐՍԱԳԻՐ ՄԸ. — 1896 Գեկտ 14ին Մարաշ բանտարկուած կարեւորագուէր փառաբանին հարցաքննութեան օրինակը մեղ հասաւ Հալէպէն. այս հարցաքննութիւնը տրուած է Մարաշի Քննիչ յանձնարարի մ'աջիւր : Յառաջիկայ թիւերուն մէջ մաս մաս պիտի հրատարակենք դայն :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Այս վայրկեանին քաղաքականութեան երկինքը թանձր ու սեւ ամպերով ծածկուած է. կուտակուած կիճիւնները բարեկուշակ լուծում մը չ'են խոտամար : Մայրապոյն Արեւելի խնդիրը սահմանուած է վճռական լուծումը գտնելու մտաւոր ապագայի մը մէջ, դուրսէ Արեւելեան խըն-

դիրէն ալ առաջ : Աւ. Եւրոպա, ճարտար ձեւապէտ—գերձակուհի մկրտող ձեռքը, միտքը գլած է երկնային կայսրութեան ծիրանին ծուխի՛ ծուխի՛ ընելու քղանցքէն սկսելով : Անցեալ տարի Մեծ, Տէրութիւններէն միայն հզօրապոյններն էին թեկնածուները, այս տարի

Իտալիայէն զատ Պելճիքան ալ բան մը կուզէ կորզել այդ անուշիկ պատուէն:

Իտալիոյ տեսարան ի նկին այս եղերակատակերգական ներկայացումն, ա՛յնչափ աւելի նշանակիչ է, ս՛րչափ իր պահանջումը ասպետական. Տը Մարթինո կ՛աճապարէ աշու վերջնագիրը, և այդ վերջնագիրը կ՛ըլլայ իր դեռ պանութեան ասպանագիրը, Փէքինէ անմիշտ պէս ևս կը կանչուի, իբր թէ նա սրբական նշանագիր մը թիւրիմացութեան զո՛ւ կզած ըլլար: Արքէն Անգլիոյ՝ Ռուսիոյ դէմ ըրած անվերջ առարկութիւնը նիմուած է ասոր՝ ի Մանչուրիա հաստատումն, Դա-Լիէն-Ուանի և Բօւ-Ղրգիւրի վարձակալման վրայ, որ մեծ հարուածը կ՛ուտայ Սղաղիւ-Քուոյի և անս՛ր համար է որ ո՛ր ինքն ալ առանց սպասելու կը գրաւէ Ռեյ-ճեյ-Ռեյ (անտարակոյս այն ընդարձակ երկրին ամբողջութիւնը պահանջուլու բարի դեռուածով) և Երկնից որդին ալ կը պարտաւորէ պատասիկ մը նոյ չ՛ալ ուրիշ ոչուէ տէրութեան: Սակայն ինք Եանք-Չէ-Քեանի հովտին մէջ կը գնէ սուքն ա՛լ չ՛եղնելու պայմանաւ. այդ ուժով կը հակառակի Փրանսական արտօնութեան դէմ ի ճանկայ: Անա՛ Սօլդպէրի կամ Սէնդ-ձէյնի գահիճին քաղաքականութեան օղաչալը, որուն աւելը անփոխփո պայծառ օրէն յանկարծ կը դառնայ մրկի: Սպասելով Ելրին, Ծայրագոյն Արեւելի հարցին, անյնինք Պալքանեան թերակզզին. խլրատւք մը կը նշմարուի հոն, խուլ ու խորունկ, որ մտալուտ պայթումի մը պիտի յանդի. Թուրքիա զօրքէ պատուար մը կը քաշէ հոն, Պուլխարիա իր խնամին երկիցս Սուլթանին ոտքերը պահնելէն և ուրիշ շատ մը քաղաքալարական, չ՛ըսնք կեղծաւորական ցոյցերէն յոքնած, զէնքի

օրէնքը նախընտրել կը թուի և այս դարնան կը խոտանայ մեղ արիւնի ու կրակի ցուցանանգէս մը, Մակեդոնիոյ կուրծքին վրայ սփռուած. ըսել է թէ Թուրքիա, և Պուլխարիա, կամ աւելի ճիշդը, Թուրքիա և Ռուսիա. պիտի չսփռին իրարու հետ և արդեօք այդ կարծիքն հաստատելու՞ համար է որ Մարտ 15ին Չէնսփիէյլ Դրան ծանուցագիր մը կ՛ուղղէ որուն մէջ անցեալ տարի Յունիսին ըրած առաջարկութիւնը կրկնէ և կը պնդէ որ անյապազ պէտք է վերջնայ 1896էն ի վեր կովկաս ապառանած հայ զաղթականաց հայրենիք վերադարձի գործողութիւնը: Ծանուցագիրը Դրան կը յանձնարարէ միջոցներ ձեռք առնուլ այս մասին և սկսիլ հետզհետէ իրեն երկիրը փոխադրել զաղթականներն այս ձմեռուան վերջնալուծն: Իսկ վերջերս Սուլթանին հուզեղէն հուրինքէն ամենէն գեղեցիկը ձեռքէն ելած և ճէնդլմէն Անգլիացիի մը թեւը մտած գէլ ի Պոմպէյ փոխած ըլլալը մեծ յուզում պատճառած է Երլարդի մէջ: Սուլթանը, վրէժ մ՛առած ըլլալու համար այդ յանգու գն Անգլիացիէն, մի նոր իրատէսով փախել կ՛ուտայ Հայաստանի մէջ բացուած եւրոպական որբանոցները, և այսպէսով հազարաւոր որբեր, անմտնոյ մերկ ու անպաշտպան կը թափառին փողոցները և սո՛լը կը հասնի լրացնելու պակասը: Ամերիկա գարծը կը շարունակէ բունի կարգի բերելու համար կզգինորուն վայրենիները. պատերազմը սկսած է արդէն և գեռ պիտի տեսէ: Ա՛յս է հիմակուան քաղաքական կայութիւնը, որուն վրայ աւելի որոշ դադափար մը կազմելու փափաքողները՝ թող գիման վերջի ներկու շաբաթուան Բարակալոյին:

Տպագրութիւն Ս. ԴԱՐԻՆԵՆԱՆԻ, Իանիք.

Le Gérant, J. MUNIER



ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԿԱՆԵՒ ԿՐԹԱՐԱՆ ԳԱՅԻՐԵԻ



Շարէ Մօհամէս Ալի Փիօնիկի խմբագր ստուեր.

ՀԻՄՆԱԴԻՐ-ՏՆՇՐԷՆ

ՄԱՐԱՏ ԲԻԻՐԱՏ

Կ'առանդուին հայերէն, անգլիեան, ֆրանսերէն եւ արաբերէն լեզուները, նախակրթական եւ երկրորդական ուսմանց ու գիտութեանց հետ, խնամալ ազգային դաստիարակութեան մը հիման վրայ :

ՏՊԲԹ, Ն, Պ, ԲԷԶԵՃԵԱՆ

Բժյոցկ-վիրաբոյժ վկայեալ յ'Ամերիկա

ժամանակիս նորագոյն մէթոտներու համաձայն կը բուժէ ներքին եւ արտաքին ամեն տեսակ հիւանդութիւններ :

Իր պաշտօնատեղին, որ կը գտնուի Շարէ Ապտ-իւլ-Ազիզի սկիզբը, Իեզարան Օսմանիյէի դիմացի առաջին շէնյին մէջ, հիւանդներ կ'ընդունուին ամեն օր առաւօտեան ժամը 10—12 եւ կէսօրէ վերջ ժամը 3—5 (ը. ե.) :

Ազբատ հիւանդներ ձրի կը դարձանուին :

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԳԻՐՔԻ ՈՒՋՈՂՆԵՐՈՒՆ

Գահիբէի եւ շրջակայից գրասէր հայ հասարակութեան գիւրութիւն մը տալու մտօք՝ կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գիրք, (Իսսախան, Իպրոցական, Իքսական Իրախան, Արուեստական, Բանասիրական, Վիպական ելլն.) որ հրատարակուած են եւ կը հրատարակուին Պօլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վիեննայի ու Վիլնիայի, կարելի է գիրքամատչելի պայմաններով ձեռք բերել՝ զմեկով Տիար Կ. Նաւասարդեանի :

ԴԵՂԱՐԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ

Շարա Մօհամէս-Ալի Պագարին դիմացը

Խաչատուրեան եղբայրց սոյն հաստատութեան մէջ խնամով կը պատրաստուին ամեն տեսակ դեղորէք չափաւոր զներով ու կը կատարուին հայ մասնագէտ բժիշկներու խորհրդակցութիւններ :

ՍԳՊԱՐԱՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԲՂԹԱՎԱՅՈՒՆՏՈՒՆ
Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆԻ
ԳՈՒՇԻՐԷ, Շարէ Մօհամէս-Ալի (Հաղպատակիէ).
—
Նր սոյնիւ ամեն յեզուէ գրքեր, յայտարարութիւններ, հարսանիքի երախտագրեր, շրջաբերականներ, մահագրեր, Եանակագրուի, անկիւրքներ, ալցեստներ, հաշուեցոյցներ, կանոնագրեր, ստացագրեր ելլն., ելլն. :
ԻԽՍ ՄԱԲՈՒՐ ԿԻ ԱԳԱՆ ԳՆԵՐՈՒ